

Արձանագրություն

26.02.2010 թ.

Մենք՝ ներքո ստորագրողներս՝ հանձնաժողովի կազմով՝ Գագիկ Ծառուկյանի հիմնադրամի ներկայացուցիչ՝ **Լևոն Գրիգորյանը**, «Հայաստանի Ուսանողական ֆորում» ՀԿ-ի նախագահ՝ **Վարդգես Հովեյանը**, **Նանե Դոնդոյանը**, Երևանի Վ. Բրյուսովի անվ. Պետական Լեզվաբանական Համալսարանի արհմիության նախագահ՝ **Խաչատուր Թևոսյանը**, աշխատակազմի ղեկավար, իրավախորհրդատու՝ **Նելսոն Ներսիսյանը**, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ Գ. Ծառուկյանի հիմնադրամի կողմից համալսարանի դասախոս Դավիթ Ֆահրադյանի՝ Գինեսի Ռեկորդ սահմանելու կապակցությամբ նվիրաբերած 10 մլն. դրամը նպատակահարմար ենք գտնում համալսարանի դասախոսներին՝ որպես օգնություն բաշխելու հետևյալ կերպ՝

41-ից ավելի տարի մանկավարժական ստաժ ունեցող դասախոսներին՝ 94 000 դրամ, որոնց թիվը համալսարանում կազմում է 33 դասախոս, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 3 մլն.102 հազար դրամ:

31- 40 տարի մանկավարժական ստաժ ունեցող դասախոսներին՝ 84 000 դրամ, որոնց թիվը համալսարանում կազմում է 38 դասախոս և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 3 մլն.192 հազար դրամ:




21- 30 տարի մանկավարժական ստաժ ունեցող դասախոսներին՝ 74 000 դրամ, որոնց թիվը համալսարանում կազմում է 23 դասախոս և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 1 մլն.702 հազար դրամ:

Դասախոսների ցուցակը կցվում է արձանագրությանը:

Միաժամանակ հանձնաժողովը նպատակահարմար է գտնում Գինեսի գրքի ռեկորդակիր Դ.Ֆահրադյանին պարգևատրելու 1 մլն. 200 հազար դրամով: Ֆարհրադյանի Գինեսի ռեկորդի կազմակերպչական

աշխատանքները ղեկավարած Խ. Թևոսյանին՝ 600 հազար դրամով, ով
ամբողջ ռեկորդի սահմանման ընթացքում զբաղվել էր բանակցությունների
վարմամբ, միջոցառման կազմակերպամբ, նոտարական և
Արդարադատության նախարարության հարցերով, փաստաթղթերի
ծնակերպմամբ, բժշկական ապահովմամբ, պաշտոնական այրերի և հյուրերի
հրավիրմամբ, հաճնաժողովի կազմամբ, վեահսկումով և նյութերի
հավաքագրումով: Կազմկոմիտեի անդամ Ե.Նազարյանին՝ 120 հազար
դրամով, ով մասնակցել է բանակցությունների վարմանը, կատարել է
տարրատեսակ թարգմանություններ, վարել է նամակագրություն, մասնակցել
է նյութերի հավաքագրմանը, պատրաստել է նաև հաշվետվությունը, որը
կկցվի արձանագրությանը, նաև միջոցառման ժամանակ եղել է
հաղորդավարը, և քարտուղարությունը ղեկավարած Ջ.Արևշատյանին՝ 84
հազար դրամով, ով զբաղվել էր բոլոր քարտուղարական աշխատանքներով,
կազմել է արձանագրությունները, միջոցառման օրը կատարել է
գրանցումները և դիմավորել է բոլոր հյուրերին, հետևել է տեսաերիզի
նկարահանումներին, որպիսի այն կատարվի պատշաճ ձևով ըստ պահանջի:
Գինեսի ռեկորդի ներկայացման փաստաթղթային իրավական ապահովումը
կազմակերպած աշխատակազմի ղեկավար, իրավախորհրդատու Ն.
Ներսիսյանը հրաժարվեց իրեն հասանելիք պարգևավճարից:

Արձանագրությանը կկցվի նաև Գինեսի ռեկորդի սահմանման հետ
առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը (30 էջ):

Լևոն Գրիգորյան	
Վարդգես Հովեյան	
Նանե Դոնդոյան	
Խաչատուր Թևոսյան	
Դ. Ֆահրադյան	
Նելսոն Ներսիսյան	